ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զեկ. Համայնքի ղեկավար Շ. Կարապետյան
Ժողովին մասնակցում էին 42 մարդ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2016 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որը կազմում է շուրջ 90.0% հանգամանք, որը խիստ մտահոգիչ է և միաժամանակ դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը: Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2016 թվականի բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, որն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված / հազ. դրամ/	Փաստացի / հազ. դրամ/	կատարման %-ը
Ընդամենը սեփական եկամուտներ	12620.3	13864.4	109.9
Հողի հարկ	3690.0	4122.9	111.7
Գույքահարկ	7810.0	8494.7	108.8
Տեղական տուրքեր	453.0	587.6	129.7
Հողի վարձավճար	44.8	46.7	104.2

Նշվեց, որ ընթացիկ տարում ուժգին կարկտահարության հետևանքով զգալիորեն տուժեցին գյուղատնտեսական մշակաբույսերը:

Անհասկանալի պատճառներով ձգձգվում է «Ոռոգման համակարգերի արդիականացման» ծրագրի շրջանակներում «խոպան» կոչվող տարածքում ինքնահոս ջրագծերի անցկացման աշխատանքները: Այնուհետև համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2016 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին.

1. Կանանց մեկամսյակի առթիվ միջոցառումների կազմակերպում համայնքապետարանի, դպրոցի և համայնքային ենթակայության հիմնարկների կին աշխատակիցների համար համերգների կազմակերպումով:
2. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված տարբեր մասսայական միջոցառումներին /այբբենարանի

հանդես, վերջին զանգ, ամանորի հանդես՝ տոնական նվերների բաժանումով և այլն/:

3. Համայնքի դպրոցի բոլոր դասարանների աշակերտների մեկօրյա հանգստի կազմակերպում Հանրապետության տարբեր տեսարժան վայրերում և մայրաքաղաքի մշակույթի օջախներում /տրանսպորտի տրամադրում/:
4. Ի ուրախություն համայնքի ազգաբնակչության համայնքի ղեկավարը նշեց, որ վերջապես իրականություն դարձավ «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները, որի համար համայնքի ազգաբնակչության անունից խորին երախտագիտություն հայտնվեց Արմավիրի մարզպետարանի աշխատակիցներին և հատկապես մարզպետ Ա. Ղահրամանյանին, այդ գործում ջանքեր չխնայելու և 40.0 մլն. դրամից ավել ծրագիրը իրականություն դարձնելու համար: Սակայն ցավալի է,որ մանկապարտեզը շուրջ երեք տարի չի գործում շինարարական աշխատանքները ամբողջովին ավարտին չհասցնելու պատճառով, որի համար անհրաժեշտ է մոտ 11.0 մլն ՀՀ դրամ, որի տրամադրումը ձգձգվում է, իսկ երեխաների մի մասը հաճախում են հարևան համայնքների մանկապարտեզներ:
5. Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չի կարող չանրադառնալ նաև այն փաստին, որ վերջապես իրականություն կդառնա համայնքի սոցիալ տնտեսական հեռանկարային զարգացման համար խիստ կարևոր մի փաստաթղթի՝ գլխավոր հատակագծի ձեռք բերմանը, որի ուղղությամբ աշխատանքները ավարտական փուլում են:
6. Վերջապես 2016թ. ամբողջությամբ հիմնանորոգվեց համայնքի մշակույթի տունը, որը հնարավորություն կտա այսուհետ բարձր մակարդակով կազմակերպել տարբեր կուլտուր մասսայական միջոցառումներ:
7. Օգնություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով մի շարք խավերի ինչպես դրամական այնպես էլ բուժման կարիքները հոգալու, նաև սոցիալապես անապահով խավի հանգուցյալների սգո պարագաների ձեռք բերման համար: Ուշադրության կենտրոնում են եղել նաև հաշմանդամ երեխաները:
8. Անբողջովին հիմնանորոգվեց համայնքապետարանի շենքը:
9. Շարունակական բնույթ են կրում համայնքի փողոցների բարեկարգման, փողոցային լուսավորության անցկացման և մանկապարտեզի գույքի ձեռք բերման աշխատանքները:
10. Համայնք մտնող և գերեզմանատուն տանող ճանապարհների երկկողմանի

հատվածներում տնկվել են շուրջ 300 դեկորատիվ ծառատեսակներ, որոնց մշակման և կպչողականության ապահովման ուղղությամբ աշխատանքները կրել են շարունակական բնույթ:

Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չնայած կատարված զգալի աշխատանքներին, այնուամենայնիվ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող խնդիրները, դրանք են՝

ա/ Ոռոգման ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը

բ/ Դպրոցում մարզադահլիճի բացակայությունը

գ/Համայնքի փոստային բաժանմունքի շենքի հիմնանորոգման հրատապությունը և այլն:

Ելույթ ունեցան նաև դպրոցի տնօրեն Ա. Վեզիրյանը, «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ս. Ասատրյանը, բուժ ամբուլատորիայի տնօրեն՝ բժշկուհի Հ. Աղախանյանը, որոնք անդրադարձան իրենց հուզող մի շարք խնդիրներին և միաժամանակ խորին երախտագիտություն արտահայտեցին համայնքապետարանի աշխատակազմին, հատկապես համայնքի ղեկավար Շ.

Կարապետյանին՝ իրենց ղեկավարած ոլորտների հանդեպ ցուցաբերած ամենօրյա հոգատարության և նյութական ու բարոյական շարունակական աջակցության համար:

Վերջում համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետ ևս ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի և անձամբ իր կողմից հնարավոր ամեն ինչ կարվի համայնքի առջև ծառացած խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնարավորինս լուծում տալու համար:

Համայնքի ղեկավար՝ Շ. Կարապետյան

16-ը հունվարի 2017 թվական
Նորակերտ համայնք